ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ <<Ուսուցման ժամանակակից մեթոդներ>>

Կազմեց՝ Ինգա Թևանյան

<<Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

<< Կապանի թիվ 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…….…..3

2. Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդ……4

3. Ռիվինի մեթոդիկան՝ ընթերցողական կարողությունների զարգացման միջոց….7

4. Հասկացման բերվող քարտերի մեթոդիկա……..9

5. Հետազոտական աշխատանք……11

6. Ավանդական և ժամանակակից մեթոդներով դասի համեմատություն……...…12

7. Եզրակացություն……13

8. Գրականություն……14

9. Հավելված 1,2……..15

10. Հավելված 3……16

11. Հավելված 4……17

12. Հավելված 5……18

13. Հավելված 6……...…..19

14. Վկայություններ……21

Ներածություն

Ուսումնական գործունեությունը ենթադրում է գիտելիքի յուրացում այս կամ այն նյութի այնպիսի վերափոխման միջոցով, որի ընթացքում այդ գիտելիքը նպատակաուղղված բացահայտվում է: Ուսումնական գործունեության ընթացքում յուրացվող նյութը վերափոխման է ենթարկվում այն նպատակով, որ բացահայտվեն և ամրագրվեն կապերը ներքինի և արտաքինի, էության ու երևույթի, ելակետայինի և ածանցյալի միջև, այսինքն՝ տեսական գիտելիքների ստացման նպատակով:Ուստի տարեցտարի մշակվում և հաստատվում են նորանոր մեթոդներ գիտության այս կամ այն բնագավառի արդյունավետ և ճիշտ ուսուցման համար: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը՝ ելնելով սովորողների կարողությունների և հմտությունների մակարդակից, դասարանի առաջադիմությունից և որակից: Ներկայումս գործող ուսուցման գործընթացում առկա խնդիրները՝ համընդհանուր անտարբերությունը, ավանդական կրթության կազմակերպման անարդյունավետությունը և այլն, լուրջ մտածելու տեղիք են տալիս: Այս խնդիրներին ավելանում են նաև գյուղական փոքրաթիվ դպրոցների թերհամալրված դասարաններում ուսուցման ճիշտ կազմակերպման և համագործակցային աշխատանքի կազմակերպման անհնարինությունը: Որպես գյուղական դպրոցի մանկավարժ, ունենալով մանկավարժական գործունեության տասնամյա փորձ ,փորձում եմ ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի և ուսուցման ժամանակակից մեթոդների միջոցով ստեղծել և ապահովել ուսումնական գործընթացի բարձր որակ:

Նախագծված աշխատանքում իմ **նպատակն է** հետազոտությամբ պարզել.

-Դասապրոցեսում ժամանակակից մեթոդների կիրառմամբ ուսման արդյունավետության ապահովումն է:

-Որքանո՞վ են աշակերտները ներգրավվում ժամանակակից մեթոդով կառուցված ինտերակտիվ դասապրոցեսին:

Հետազոտության **խնդիրը**: Հետազոտության խնդիրն է սահմանել հայոց լեզվի դասի շրջանակներում ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացման եղանակներ: Այս բոլորի ուսումնասիրման, ներկայացման համար ես առաջարկում եմ դժվարությունների հաղթահարման հետևյալ տեխնոլոգիաները, որոնք կներկայացնեմ սույն աշխատության մեջ:

Հետազոտության **արդիականությունը:** Հետազոտության արդիականությունը ուսուցչի կողմից ճիշտ ընտրված նորարարական մեթոդների կիրառումն է:

Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդ

Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան նախատեսված է անցած նյութի կրկնության և ամրապնդման համար: Երբ ավարտվում է ծրագրի որոշակի բաժնի կամ նրա ինչ–որ մասի ուսումնասիրումը, կատարված են առաջադրանքները, առաջ է գալիս ստուգման հարցը: Սովորողն ինչպե՞ս պետք է համոզվի, որ տվյալ բաժնի բոլոր հիմնական մասերը յուրացրել է: Ինչպե՞ս կարող է ինքն իրեն ստուգել նախքան ուսուցչի մոտ թեման հանձնելը: Դրա համար կիրառվում է անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան: Փոփոխական կազմով զույգերով աշխատանքը կիրառվում է սխալները բացահայտելու և ուղղելու նպատակով:Բացի այդ հնարավորություն է ունենում ընթացքում ամրապնդելու, վերհիշելու, ավելի խորությամն յուրացնելու անցած ուսումնական նյութերը:Այստեղ զարգանում են սովորողի հետևյալ կարողությունները.

Մեթոդի կիրառման համառոտ նկարագիրը

1.Մեթոդը կիրառելի է ցանկացած առարկայի ուսուցման դեպքում/թեմատիկ ամփոփման դեպքում

2.Ուսուցիչը թեման ամփոփող հարցերի և առաջադրանքների խումբ է կազմում

3.Դրանցից կազմվում են անհատական քարտեր

4.Կազմվում է հաշվառման աղյուսակ ,որի մեջ ընդգրկվում է երեխաների անուն ազգանունները և առաջադրանքները

5.Աշակերտներին ներկայացվում է աշխատանքի քայլերը,յուրաքանչյուր սեղանին դրվում է աշխատանքի քայլերը ներկայացնող հուշաթերթիկը

Հուշաթերթիկ

Քայլ 1

Վերցրու՛ անհատական հանձնարարությունը

Քայլ 2

Հաշվառման աղյուսակում անվանդ դիմաց կե՛տ դիր ●

Քայլ 3

Կատարի՛ր ինքնուրույն

Քայլ 4

Կատարելուց հետո աղյուսակում կետը դարձրու՛ —

Քայլ 5

Աշխատի՛ր զույգով՝ նորից կատարելով նույն հանձնարարությունը՝ այս անգամ մեկնաբանելով:

Քայլ 6

Զույգով աշխատանքը ավարտելուց հետո՝ – ը դարձրու՛ +

Քայլերը հուշող հրահանգները օգնում են սովորողների մեջ զարգացնել ինքնակառավարման հմտությունները:

Այս հուշաթերթիկի օգնությամբ ուսուցիչը կարողանում է հետևել, թե ինչպես են ինքնուրույն կարողանում աշխատել աշակերտները,ժամանակ է շահում ավելի մեծ թվով սովորողների համար անհատական մոտեցում ապահովելու համար:

Աշակերտներն աղյուսակը հաշվառում են ինքնուրույն,այն փակցվում է տեսանելի տեղում,որտեղ աշխատանքները կատարում են իրենք:

Անուն ազգանուն	ԱՀ1	ԱՀ2	ԱՀ3	ԱՀ4	ԱՀ5	ԱՀ6	ԱՀ7
Գևորգյան Հակոբ	.						+
Դավթյան Մարկ		-					
Չոբանյան Անի				-			
Չոբանյան Լիլի		.					+
Հարությունյան Վահե							-

. նշանակում է, որ հանձնարարությունը նոր է ստացել հանձնարարությունը
-նշանը նշանակում է, որ ավարտել է իր հանձնարարությունը և հիմա աշխատում է զույգի հետ
+ նշանակում է, որ ավարտել է աշխատանքը զույգի հետ
Յուրաքանչյուր աշակերտ պետք է կատարի հետևյալ քայլերը
1.Ստանում է հանձնարարությունը:
2.Կատարում է ինքնուրույն:
3.Ավարտելուց հետո միևնույն հանձնարարությունը կատարում է զույգի հետ ,սակայն կատարեկու հետ մեկտեղ փորձում է ապացուցել, որ ինքը ճիշտ է արել իր քայլերը և հանձնարարությունը ճիշտ է կատարել
4.Զույգով աշխատելիս և իր անվան դիմաց համապատասխան նշումը կատարելուց հետո սովորողը ստանում է հաջորդ հանձնարարությունը Ուսուցիչն ինքն է որոշում, թե քանի հանձնարարություն կատարի նա:

Ռիվինի մեթոդիկան՝ ընթերցողական կարողությունների զարգացման միջոց

Կարդալու կարողությունների զարգացումը մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է: Մարդու մտավոր զարգացման մակարդակը որոշվում է նաև ձեռք բերած տեղեկույթը իմաստավորելու կարողությամբ: Ուսուցչի խնդիրն է ամենայն ուշադրությամբ հետևել, թե ինչպես է աշակերտը ընկալում,մշակում, իմաստավորում, պահպանում,հաղորդում և օգտագործում տեղեկույթը: Ավանդական մեթոդներով դասընթացն իրականացնելիս աշխատել եմ բազմաթիվ աշակերտների հետ, որոնք ունեն կարդալու կարողության տարբեր մակարդակներ: Ակնհայտ է, որ նման դեպքում դասի ընթացքը դառնում է ձանձրալի այն աշակերտների համար, ովքեր ավելի արագ են յուրացնում ուսումնական նյութը: Իսկ Ռիվինի մեթոդիկայով աշխատանքի կազմակերպման ընթացքում, աշակերտները, աշխատելով փոփոխական կազմով զույգերով՝ միևնույն աշակերտը մի դեպքում իր կարողություններով գերազանցել է ընկերոջը, մեկ այլ դեպքում ՝ հետ է մնացել նրանից: Երկու դեպքում էլ փոխազդեցության բնույթն այնպիսին է , որ նրանում ներգրավված աշակերտը չի մնացել պասիվ հայեցողության վիճակում,այլ դարձել է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից: Ռիվինի մեթոդով բնագրերի ուսումնասիրություն կատարելու համար ընտրել եմ 6-րդ դասարանի աշակերտներին /<> դասագիրք/ և կատարել հետազոտություն /արդյունքները տե՛ս դիագրամով/: Արդյունքում աշակերտները ձեռք են բերել հարցաշար կազմելու կարողություն, իսկ դա գլխավորը երկրորդականից տարբերելու, բնագրի փոքրիկ պարբերությունների բովանդակությունն ամփոփ ներկայացնելու կարողության մասին է խոսում: Ինչպես ցույց տվեց իմ աշխատանքային փորձը՝ ուսումնական գործունեության այսօրինակ կազմակերպումն աշակերտների համար ստեղծում է հաճելի ու տրամադրող մթնոլորտ: Նրանք սովորում են ազատ մտքեր փոխանակել,բանավիճել,օգնել միմյանց, շշուկով խոսել, այս ամենով հանդերձ՝ նաև յուրացնել տեղեկույթի մշակման, պահպանման և հաղորդման գաղտնիքները: Սովորողների մեջ ձևավորվում է բարոյական պատասխանատվություն կոլեկտիվի հանդեպ: /

Ստորև ներկայացված է Ռիվինի մեթոդիկայով աշխատանքի կազմակերպման աղյուսակը , իսկ դասի պլանը տե'ս 5-րդ հավելվածում /:

Հաշվառման աղյուսակ

Աշակերտի անուն ազգանուն	Թ1	Թ2	Թ3	Թ4	Թ5	Թ6	Թ7	Թ8
Աշակերտ 1	.				+			
Աշակերտ 2		+				.		
Աշակերտ 3		.		+				
Աշակերտ 4		.	+					
Աշակերտ 5				.				+
Աշակերտ 6		.			+			
Աշակերտ 7	+			.				
Աշակերտ 8			+				.	

. Ուսումնասիրվող թեմա Թ դասի թեմա + յուրացված թեմա

Կիրառելով Ռիվինի մեթոդիկան՝ գրանցվել է որակական հետևյալ աճը



Հասկացման բերվող քարտերի մեթոդիկա

Պետք է նշել,որ նոր դասանյութի հասկացման գորընթացը աշակերտի մոտ կարող է ստացվել շատ ավելի դանդաղ,քան մտածում է ուսուցիչն իր պատմելու ընթացքում:

Հասկացման բերվող քարտերը օգտագործվում են ոչ թե թեմայի յուրացման մակարդակը ստուգելու համար, այլ թեմայի ըմբռնումն ապահովելու համար: Հարցերն ու առաջադրանքները պետք է լինեն այնպիսին, որ աշակերտը, անկախ ժամանակից, պատասխանների միջոցով հանգի թեմայի ըմբռնմանը: Ըմբռնումից հետո նա կլինի ինքնավստահ և կկարողանա կատարել հաջորդ առաջադրանքները:

Հասկացման բերող քարտերը բաղկացած են այնպիսի հարցերից ու առաջադրանքներից, որոնք աշակերտին հանգեցնում են թեմայի ըմբռնմանը: Պատասխանելով հարցերին և կատարելով առաջադրանքները՝ աշակերտը ճիշտ է ընկալում իր թեման: Այլ խոսքով՝ հասկացման բերող քարտերի միջոցով կազմակերպվում է հասկացման գործընթացը և ասես կառավարվում է աշակերտի մտածողությունը: Հարցերն ու առաջադրանքները պետք է լինեն այնպիսին, որ աշակերտը կարողանա դրանք կատարելու ոչ թե թեման ըմբռնելուց հետո, այլ հակառակը՝ առաջադրանքների կատարման գործընթացը և պատասխանները պիտի հանգեցնեն թեմայի ըմբռնմանը: Հասկացման բերող քարտերը կազմվում են մի քանի խումբ հարցերից ու առաջադրանքներից: Առաջին խմբում ձևակերպվում են հարցեր, որոնք մի կողմից նպատակաուղղված են անցած նյութը ստուգելուն, որն անհրաժեշտ է նորը հասկանալու համար,մյուս կողմից՝ այդ խմբի հարցերն ու առաջադրանքերը աշակերտի ուշադրությունը կենտրոնացնում են նոր նյութի վրա: Հաջորդ խմբի հարցերն ու առաջադրանքները աշակերտի ուշադրությունը հրավիրում են տարբեր բառերի և բառակապակցությունների վրա: Երրորդ խմբի հարցերը վերաբերում են ուսումնասիրվող նյութի իմաստին: Հենց այս խմբի հարցերն ու առաջադրանքներն են ապահովում ըմբռնումը: Այնուհետև կարող են հաջորդել հարցեր և առաջադրանքներ, որոնք ուղղված են հասկացված նյութն ամրապնդելուն և խորացնելուն: Հատուկ նշանակություն ունի հարցերի ու առաջադրանքների ներքին կապը:

Ուսումնական գործընթացում ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերի կրառումը ենթադրում է ուսուցչի կողմից մի շարք կարևոր խնդիրների լուծում. Ուսումնական նյութի քարտերի պատրաստում /օրինակ, կարող են ստեղծել տարբեր խոսքի մասերի առանձնահատկությունների ուսումնասիրության համար նախատեսված քարտեր՝ <<Ածականի տեսակները>>, <<Թվական անուն>> և այլն /, աշակերտների՝ այդ քարտերով աշխատելու գործընթացի կազմակերպում և վերահսկում , հաշվառման աղյուսակի ստեղծում: Բնականաբար, միայն մեթոդապես ճիշտ կազմված քարտերի միջոցով է պայմանավորված և՛ աշակերտների ինքնուրույն ու զույգային աշխատանքի հաջող կազմակերպումը, և՛ ուսումնասիրվող նյութի յուրացման մակարդակը: Ներկայացնեմ ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերով աշխատանքի կազմակերպման քայլերը.

1. Յուրաքանչյուր աշակերտ ստանում է հասկացման բերող մեկ քարտ: Ընդ որում՝ աշակերտներին կարող են տրվել ըստ թեմայի տարբեր քարտեր կամ մի քանի աշակերտ կարող են ստանալ նույն քարտը:

2. Ամեն մի աշակերտ ինքնուրույն ուսումնասիրում է իր ստացած քարտը, կարդում է քարտի սկզբում տրված կանոնը կամ այն միտքը, որն իքնը պետք է յուրացնի ,ապա հերթով կարդում է տրված հարցերը կամ առաջադրանքները և տետրում գրավոր

պատասխանում դրանց:

3. Քարտի բոլոր հարցերին պատասխանելուց և բոլոր առաջադրանքները կատարելուց հետո աշակերտը մոտենում է ուսուցչին, որը ստուգում է աշխատանքի կատարումը:

4. Իրենց քարտերի շուրջ աշխատանքն ավարտած աշակերտները զույգեր են կազմում և օգնում իրար՝ յուրացնելու միմյանց քարտերը: Երբ նոր քարտ ուսումնասիրելիս աշակերտն աշխատում է այդ նյութն արդեն յուրացրած դասընկերոջ հետ, վերջինս կատարում է ստուգողի դեր: Այնուհետև երկրորդ աշակերտը նույն ձևով ուսումնասիրում է զույգի քարտը, իսկ այս անգամ առաջին աշակերտն է կատարում ստուգողի դերը:

5. Աշխատանքն ավարտելուց հետո զուգընկերները բաժանվում են. նրանցից ամեն մեկն սկսում է աշխատել մեկ այլ՝ նոր աշակերտի հետ՝ մեկ այլ քարտ ուսումնասիրելու նպատակով:

Աշխատանքն այսպես շարունակվում է այնքան, մինչև աշակերտներից յուրաքանչյուրը յուրացնում է բոլոր քարտերի ուսումնական նյութը: Ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերով աշխատելու ողջ գործընթացը վերահսկելու համար անհրաժեշտ է ունենալ հաշվառման աղյուսակ, որտեղ նոր քարտ ուսումնասիրող աշակերտի անվան դիմաց նշվում է * նշանը, իսկ երբ նա ավարտում է աշխատանքն այդ քարտի շուրջը, նշվում է + նշանը: Այսպես պարզ է դառնում, թե որ աշակերտը քանի քարտ է յուրացրել: Այսպիսով, ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերով աշխատելիս իրականացվում է և՛ ինքնուրույն, և՛ զույգային, և՛ խմբային աշխատանք: Այդպիսի քարտերով աշխատելիս աշակերտները հանդես են գալիս մեկ սովորողի, մեկ ստուգողի, մեկ սովորեցնողի դերում: Բացի այդ, ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերի միջոցով ապահովվում է տարամակարդակ ուսուցում. Յուրաքանչյուր աշակերտ ստանում է իր մտավոր հնարավորությանը, գիտելիքների մակարդակին և մտածողության բնույթին համապատասխան քարտ և իրականացնում է իրեն հետաքրքրող, հետևաբար՝ հաղթահարելի աշխատանք:

Կիրառելով Հասկացման բերող քարտերի մեթոդիկան՝ գրանցվել է որակական հետևյալ աճը.



Հետազոտական աշխատանք

Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ 10-րդ դասարանում <<Հայոց լեզու առարկայից>>՝ <<Ձայնավորների ուղղագրությունը և ուղղախոսությունը>> թեման ուսուցանելու ժամանակ:

<<Է-ե>>ձայնավորների ուղղագրության ուսուցումն իրականացրել եմ ավանդական մեթոդներով, ինչի արդյունքում հիմնականում եղել է նոր նյութի հաղորդման դաս: Դասապրոցեսն ընթացել է ուսուցչակենտրոն, դասախոսություն, հարց ու պատասխանների և վարժությունների կատարմամբ:

Երկհնչյունների և յ ձայնակապի ուղղագրության ուսուցումն իրականացրել եմ ժամանակակից մեթոդներով: Նախապես կազմել եմ հայտորոշիչ թեստեր Ա և Բ մակարդակի՝ աշակերտների նախնական գիտելիքները ստուգելու նպատակով: /Հավելված 1/

Հայտորոշիչ թեստից հետո կատարել եմ արդյունքների վերլուծություն և ամփոփել աղյուսակում:

Հարց	ԲաղալյանԱլեն	Գրիգորյան Մարատ	Դավթյան Սպարտակ	Ղալամյան Նարեկ	Գալստյան Էրիկ	Արդյունք
Ի՞նչ է երկհնչյունը:	+	+	+	-	-	40%
Որո՞նք են ժամանակակից հայերենի երկհնչյունները:	-	-	+	-	+	60%
Ո՞ր երկհնչյունների գրության և արտասանության միջև կարող են տարբերությունն եր լինել	-	-	-	-	+	80%
Ո՞րն է կոչվում ձայնակապ	+	+	+	+	+	0%

Նոր նյութի հաղորդման համար կազմել եմ օրվա պլան /Հավելված 3,4,5/ և նպատակահարմար եմ գտել որպես մեթոդ ընտրել կոլեկտիվ ուսուցման եղանակներից հասկացման բերվող քարտերի մեթոդիկան: /Հավելված 6/

Թեմայի ամփոփման համար իրականացրել եմ ձևավորող գնահատում թեստային աշխատանքի միջոցով, որի մեջ ընդգրկել եմ հայտորոշիչ թեստից հարցեր: /Հավելված 2/ Իրականացրել եմ արդյունքների վերլուծություն, ապա համեմատել: Արդյունքում ունեցել եմ դրական աճ, ինչը չեմ ապահովել ավանդական մեթոդներով ուսուցանելիս:

Հարց	ԲաղալյանԱլեն	Գրիգորյան Մարատ	Դավթյան Սպարտակ	Ղալամյան Նարեկ	Գալստյան Էրիկ	Արդյունք
Ի՞նչ է երկինչյունը:	+	-	-	-	-	80%
Որո՞նք են ժամանակակից հայերենի երկինչյունները:	-	-	+	-	-	80%
Ո՞ր երկինչյունների գրության և արտասանության միջև կարող են տարբերություններ լինել	-	-	-	-	+	80%
Ո՞րն է կոչվում ձայնակապ	-	+	+	-	-	60%
Գրել մեկական անձնանուն և տեղանուն ***իա*** տառակապակցությամբ	-	-	-	+	+	60%
Գրել առնվազն մեկական բառ ***իա, իե, իո, եա, եո*** տառակապակցությունն երով	+	-	+	-	-	60%

Ավանդական և ժամանակակից մեթոդներով դասի համեմատություն

Ավանդական դաս	Ժամանակակից մեթոդներով դաս
Ուսումնական նյութը ծավալուն է,հաճախ կարևորն ու անկարևորը տարբերակված չեն	Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ
Ուսումնառության նպատակները ոչ միշտ են չափելի և թափանցիկ	Ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ սովորողների համար
Շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների ուսուցման վրա	Գիտելիքներից և հմտություններից զատ՝ կարևորվում է արժեքներն ու վերաբերմունքը
Կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցում	Առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են նաև վերառարկայական հմտությունները
Առավել կարևորվում է ուսումնական նյութի վերարտադրությունը՝ առանց մտածողության և գործնական հմտությունների հետ կապակցելու	Կարևորվում է բովանդակության խորը ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ
Հիմնականում օգտագործվում է միավորային գնահատումը: Այն օգտագործվում է սովորողներին դասդասելու համար	Շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա:Գնահատականը օգտագործվում է սովորողների առաջադիմությունը չափելու համար

Եզրակացություն

Արդյունավետ ուսուցման պահանջներ բոլորս պետք է ունենանք: Դասավանդման մեջ բազմազանություն մտցնելով, դասը իրականության հետ կապելով, տարբեր գործողություններ մշակելով, խրախուսելով, հնարներ կիրառելով՝ մոտ կկանգնենք որակյալ և արդյունավետ ուսուցմանը:

Հետազոտության ընթացքու մենք եկանք այն եզրահանգմանը, որ ժամանկակից և կարողունակությունների զարգացմանն ուղղված դասի ընթացքում աշակետների մասնակցության և ակտիվության ցուցանիշը ավելի բարձր է, քան ավանդական դասի ընթացքում: Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառման արդյունքում բարձրացավ սովորողների իմացական գործունեությունը, ինքնուրույն սովորելու կարողությունը, ինքնագնահատման և հաղորդակցման հմտությունները :

Այստեղ ես ուզում եմ խոսել նաև կոլեկտիվ եղանակով դասավանդման ժամանակ իմ առջև ծագած խնդիրների, հաջողությունների և անհաջողությունների մասին:

Հաջողություններ: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ բոլոր երեխաներն էլ սովորում են , բայց տարբեր տեմպերով՝ և դա բնական է , քանի որ այս պարապմունքների ժամանակ հաջողության ուղենիշը ոչ թե գնահատականն է, այլ ուսումնական նյութի որակյալ յուրացումը: Սովորողները ուղղորդվում են միայն դրական օրինակներով:Ուսուցիչը երկուսներով չի պատժում ծրագրից ետ մնացած սովորողներին: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ներդրման շնորհիվ՝ ձևավորվում է ուսուցչի և աշակերտի համագործակցության և փոխօգնության միջավայր:Սովորողների մոտ դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ: Բարձրանում է սովորողների պատասխանատվության և ուսման առաջադիմության մակարդակը: Բարելավվում է առանձին առարկաների ոլորտում ձեռք բերված գիտելիքների,կարողությունների և հմտությունների որակն ու ուսումնական առաջադիմությունը:

Դժվարություններ: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների կիրառման ժամանակ՝ հնարավոր չի լինում առաջնորդվել ուսումնական ծրագրով: Դասապրոցեսը չի կարող սահմանափակվել 45 րոպեով: Բոլոր առարկաներից և դասանյութերից առկա չեն անհրաժեշտ ուսումնական նյութերը/ քարտեր, աղյուսակներ, հաշվառման թերթիկներ և այլն/: Ինչ խոսք, մեթոդիկաների քարտեր կազմելը շատ աշխատատար է: Ամեն մի մտահաղացման համար հարկավոր է երկար պատրաստվել, սակայն կարծում եմ՝ դա ժամանակի խնդիր է և տարեցտարի իմ մշակած նյութերի, քարտերի շնորհիվ ավելի հեշտ կլինի հետագա գործընթացի կազմակերպումը: Դասարանում տիրող խառնաշփոթային իրավիճակ, աղմուկ զույգերում կամ խմբերում, քանի որ մեթոդիկաների քայլաշարերին էլ դեռևս չեն տիրապետում աշակերտները:

Ի վերջո, ուսումնասիրելով և կիրառելով ուսուցման կոլեկտիվ եղանակների մեթոդիկաները, եկա այն եզրահանգման, որ այս մեթոդիկաների շնորհիվ զարգանում է աշակերտների ինքնուրույնությունը, կարողունակություններն էլ ավելի են զարգանում, քան ավանդական՝ դաս-դասարանային համակարգով ուսուցում կազմակերպելու ընթացքում: ***Հավատեության ջերմ զգացումով, երբ նայում եմ իմ աշակերտներին,մտածում եմ, որ նրանք կարող են հաղթահարել բոլոր դժվարությունները, երևակայում եմ նրանց ապագայի հսկայական քայլերը և լցվում անսահման ուրախությամբ:***

Գրականություն

1. Սերոբ Խաչատրյան << Ուսուցման արդյունավետ հնարներ>> 2020

2. <<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ վերապատրաստող կազմակերպության տրամադրած ուղեցույց,

3. Մանուկ Մկրտչյան <<Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական,տեսական և գործնական հարցերը>>,Երևան 2011

4. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, - Եր.: 1954

Հավելված 1: Դաս 6-7. Երկհնչյունների և Ց ձայնակապի ուղղագրությունը

Հայտորոշիչ թեստ

Դասարան՝ ----------
Առարկա՝ ----------
Անուն, ազգանուն ----------
Ուսուցիչ ----------

1. Ի՞նչ է երկհնչյունը։ /1մ/

---

2. Որո՞նք են ժամանակակից հայերենի երկհնչյունները։ /1մ/

---

3. Ո՞ր երկհնչյունների գրության և արտասանության միջև կարող են տարբերություններ լինել։ /1մ/

---

4. Ո՞րն է կոչվում ձայնակապ։/1մ/

Հավելված 2: Դաս 6-7. Երկհնչյունների և Ց ձայնակապի ուղղագրությունը

Թեստային աշխատանք

Դասարան՝ ----------
Առարկա՝ ----------
Անուն, ազգանուն ----------
Ուսուցիչ ----------

1. Ի՞նչ է երկհնչյունը։ /1մ/

---

2. Որո՞նք են ժամանակակից հայերենի երկհնչյունները։ /1մ/

---

3. Ո՞ր երկհնչյունների գրության և արտասանության միջև կարող են տարբերություններ լինել։ /1մ/

---

4. Ո՞րն է կոչվում ձայնակապ։/1մ/

---

5. Գրել մեկական անձնանուն և տեղանուն ***իա*** տառակապակցությամբ։/2մ/

---

6. Գրել առնվազն մեկական բառ ***իա, իե, իո, եա, եո*** տառակապակցություններով։/2մ/

Հավելված 3

ԴԱՍԻ ՊԼԱՆ

1	Ուսուցչի անուն,ազգանուն	Ինգա Թևանյան	
2	Ամիս/ամսաթիվ	15.09.2023թ	
3	Առարկա	Հայոց լեզու	
4	*Դասարան*	10-րդ	
5	Դասի տևողությունը	45 րոպե	
6	Դասի տեսակը	Նոր նյութի հաղորդում	
7	Թեման	Երկհնչյունների և ը ձայնակապի ուղղագրությունը	
8	Նպատակները	Իմանալ երկհնչյունների ուղղագրության և ուղղախոսության կանոնները Կարողանալ՝ ձևավորել անսխալ գրելու կարողություն	
9	Վերջնարդյունք	-կատարել թեստային աշխատանք երկհնչյունների շեշտափոխական հնչյունափո-խության, լծորդ հնչյունների ուղղագրության վերաբերյալ	
10	Միջառարկայական կապ	Գրականություն	
11	Ուսումնական նյութեր	Դասագիրք, տետր, բառատետր, գրատախտակ	
12	Խաչվող հասկացություններ	.Կայունություն և փոփոխություն .օրինաչափություն	
13	Օգտագործվող հիմնական նյութերը	Գրատախտակ, բառատետր, դասագիրք,ուղղագրական բառարան	
14	Ընթացք	Հայտորոշիչ թեստ 1.Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի կիրառում՝ իր ողջ քայլաշարով:	
15	Գնահատում	Միավորային	
16	Անդրադարձ	Т -աձև աղյուսակի կազմում	
17	Տնային հանձնարարություն	Սովորել կանոնները, կատարել թեստային աշխատանք	

Հավելված 4

ԴԱՍԻ ՊԼԱՆ

1	Ուսուցչի անուն,ազգանուն	Ինգա Թևանյան	
2	Ամիս/ամսաթիվ	15.09.2023թ	
3	Առարկա	Հայոց լեզու	
4	*Դասարան*	10-րդ	
5	Դասի տևողությունը	45 րոպե	
6	Դասի տեսակը	Ամփոփման դաս	
7	Թեման	Երկհնչյունների և ը ձայնակապի ուղղագրությունը	
8	Նպատակները	Իմանալ երկհնչյունների ուղղագրության և ուղղախոսության կանոնները Կարողանալ՝ ձևավորել անսխալ գրելու կարողություն	
9	Վերջնարդյունք	-կատարել թեստային աշխատանք երկհնչյունների շեշտափոխական հնչյունափո-խության, լծորդ հնչյունների ուղղագրության վերաբերյալ	
10	Միջառարկայական կապ	Գրականություն,անգլերեն	
11	Ուսումնական նյութեր	Դասագիրք, տետր, բառատետր, գրատախտակ	
12	Խաչվող հասկացություններ	.Կայունություն և փոփոխություն .օրինաչափություն	
13	Օգտագործվող հիմնական նյութերը	Գրատախտակ, բառատետր, դասագիրք,ուղղագրական բառարան	
14	Ընթացք	Հարց ու պատասխան, թեստային աշխատանք, արդյունքների վերլուծություն	
15	Գնահատում	Ձևավորող ,միավորային	
16	Անդրադարձ	ԳՈՒՍ աղյուսակ	
17	Տնային հանձնարարություն	Թեստային աշխատանք	

Հավելված 5

ԴԱՍԻ ՊԼԱՆ

1.Դասի թեման՝ Վ. Բաբայան , <<Աստղեր>>
2. Դասարան 6_ՐԴ
3.Առարկա- Մայրենի
4.Դասի տիպը -Նոր նյութի մատուցման դաս
5.Դասի նպատակները Իմանալ՝ .արտահայտիչ կարդալ և արտասանել բանաստղեծությունը .ընկալել բանաստեղծության կառուցվածքը և տաղաչափական պատկերը .մարդկանց, առարկաների, երևույթների բնորոշ հատկանիշները տեսնելու,համեմատելու և համապատասխան խոսք կառուցելու կարողություններ ունենալ
6.Վերջնարդյունք-ստեղծագործության գաղափարը ընկալելու և վերլուծելու կարողություն
7.Մեթոդներ՝ Ռիվինի մեթոդիկա
8.Անհրաժեշտ պարագաներ ՝ գրատախտակ, կավիճ, քարտեր, դասագիրք, տետրեր, գրիչներ նկարներ
9.Խաչվող հասկացություններ ՝ կայունություն և օրինաչափություն
10.Ներառարկայական կապ՝ Հայոց լեզու
11.Միջառարկայական կապ՝ Բնագիտություն
12.Դասի ընթացքը՝ 1. Ռիվինի մեթոդիկայի կիրառումը իր ողջ քայլաշարով , տեքստը հատվածներով կարդալու և վերլուծելու մեթոդ
13.Անդրադարձ 3-2-1 մեթոդ
14. Գնահատում
15. Տնային աշխատանք

Հավելված 6: Դաս 6-7. Երկհնչյունների և Յ ձայնակապի ուղղագրությունը

Հարցեր առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է երկհնչյունը:
2. Որո՞նք են ժամանակակից հայերենի երկհնչյունները:
3. Ո՞ր երկհնչյունների գրության և արտասանության միջև կարող են տարբերություններ լինել:
4. Ո՞րն է կոչվում ձայնակապ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկհնչյուն է կոչվում յ-ի և որևէ ձայնավորի արտասանական միասնությամբ կազմված կապակցությունը:

2. Ժամանակակից հայերենի երկհնչյուններն են **այ, յա, էյ, յէ, ույ, յու, օյ/ոյ/, յօ/յո/, յի, յը**, օրինակ՝ *մատյան, թեյ, Նոյ, գնայի, հայը, լույս, այուն, հայելի* և այլն:

3. Հայերենում **յո** և **յա** երկհնչյունների գրության և արտասանության միջև որոշ տարբերություններ կան:

Յո –իո	Յո-եո
Ամբիոն Աքսիոմ Բյուզանդիոն Գիլիոտին Միլիոն Մարմարիոն Չեմպիոն Ռադիո Օրիորդ Տրիլիոն	Ակորդեոն Ամեոբա Թեորեմ Լեգեոն Նապոլեոն Քամելեոն

Յա-իա	Յա-եա
1.Մի շարք բառերում՝ալելուիա, ակացիա, բամիա, կրիա, հեքիաթ, մումիա, խավիար, դաստիարակ և այլն 2.Տեղանուններում՝ Անգլիա, Գերմանիա, Իտալիա և այլն 3.Արական մի շարք անձնանուններում՝ Ազարիա, Եղիա, Երեմիա, Անանիա և այլն /բայց՝ Վոլոդյան, Իյլա, Կոլյա, Վանյա/ 4.Իգական անձնանուններում՝Յա՝ Ամալյա, Արաքսյա, Օֆելյա և այլն, բայց՝ Լիանա, Լիա, Մարիա, Մարիամ:	Անդրեաս Իդեալ Հրեա Սեանս

4. Բառի իրար հաջորդող ձայնավորների միջև արտասանվող *յ* հնչյունը կոչվում է ***ձայնակապ***:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գրել 4-ական անձնանուն և տեղանուն ***իա*** տառակապակցությամբ:
2. Գրել առնվազն 2-ական բառ ***իա, իե, իո, եա, եո*** տառակապակցություններով:
3.Լրացնել անհրաժեշտ երկհնչյունը կամ տառակապակցությունը: Յուրաքանչյուր շար քում գտնել ուղղագրության տեսանկյունից ,,ավելորդ,, բառը

ա/ ռադ…հաղորդում, պ…ներ, արդ…ք, ….նային,
բ/հ…..ռեգլիֆ, քվ…րկություն, ֆել…տոն, պրեմ…ռա,
գ/թ…ռեմ, աքս…մ, քամել…ն, Նապոլ…ն։
4. Արտագրել՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով *յռ, իռ* կամ *եռ*/վարժ.14-էջ 31/։

Վկայություններ